



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 96- Ա/2

04 փետրվարի 2020

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Տարեցների հանրապետական խաղեր» մրցույթի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) «Տարեցների հանրապետական խաղեր» մրցույթի մասնակցության հայտը՝ համաձայն № 2 հավելվածի:



X

ՆԱԽԱՐԱՐ

Signed by

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ»

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. «Տարեցների հանրապետական խաղեր» (այսուհետ՝ Խաղեր) նպատակներն են՝
 - 1) տարեց բնակչության առողջության ամրապնդում,
 - 2) առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում:
2. Խաղերի խնդիրներն են՝
 - 1) տարեց բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, սոցիալական հավասարության խթանում, սպորտի մասսայականացում,
 - 2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում և հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրում:

II. ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Խաղերը անցկացվելու է երեք փուլով՝ համայնքային, մարզային և հանրապետական:
 - 1) 1-ին փուլի անցկացման պատասխանատվությունը կրում են քաղաքային և գյուղական համայնքները:
 - 2) 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան վարչությունները և բաժինները:
 4. 2-րդ և 3-րդ փուլերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):
 5. Եզրափակիչ փուլի անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

III. ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

6. Խաղերին կարող են մասնակցել 63 տարեկանից բարձր տարիքի տարեց թոշակառու մարդիկ, որոնք ունեն բժշկի թույլտվություն:

7. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզից կարող են մասնակցել ընդամենը 10 մասնակից և 1 ներկայացուցիչ, 5 տղամարդ և 5 կին:

IV. ԽԱՂԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

8. 1-ին փուլը՝ համայնքներում՝ հուլիս ամսին.

9. 2-րդ փուլն անցկացվելու է օգոստոսի 15-ից 25-ը, ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում.

10. 3-րդ հանրապետական փուլ՝ սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը, Ծաղկաձոր քաղաքում:

V. ԽԱՂԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

11. Խաղերն անցկացվելու է 5 մարզաձևերից՝ շախմատ, շաշկի, նարդի (կարճ), բասկետբոլի գնդակի նետում զամբյուղի մեջ և դարթս:

12. Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մասնակցելու միայն մեկ մարզաձևում:

| N | Մարզաձևերը | Ներկայացուցիչ | | | Ընդամենը |
|----|--|---------------|-----|---|----------|
| | | Տղամարդ | Կին | | |
| 1. | Շախմատ | 1 | 1 | - | 2 |
| 2. | Շաշկի | 1 | 1 | - | 2 |
| 3. | Նարդի | 1 | 1 | - | 2 |
| 4. | Դարթս | 1 | 1 | - | 2 |
| 5. | Բասկետբոլի գնդակի նետում զամբյուղի մեջ | 1 | 1 | | 2 |
| | Ընդամենը՝ | 5 | 5 | 1 | 11 |

13. Խաղերի յուրաքանչյուր մարզաձևում որոշվում են 1-ից 12-րդ տեղերը հետևյալ կերպ՝ 1-ին տեղ՝ 12 միավոր, 2-րդ տեղ՝ 11 միավոր, և այդպես մինչև 12-րդ տեղը:

14. Խաղերի եզրափակիչ փուլի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը, իսկ 1-ին փուլի անցկացման կարգը տեղերում համապատասխան կազմկոմիտեները:

15. Խաղերի ծրագիրը և մրցումների անցկացման պայմանները.

| | | | |
|----|--|---|---|
| 1. | Շախմատ (անհատական մրցումներ) (տղամարդ, կին) | - | <p>Մրցումներն անցկացվում են շախմատի գործող կանոնների համաձայն շրջանային մրցակարգով, վիճակահանությամբ, խաղի տևողությունը՝ 20-ական րոպե:</p> <p>Միավորների հավասարության դեպքում տրվում է լրացուցիչ խաղ՝ 5 + 5 րոպե տևողությամբ:</p> <p>Մրցումներին 12 մասնակիցները վիճակահանությամբ բաժանվում են 2 ենթախմբի, և մրցման արդյունքներով յուրաքանչյուր ենթախմբում որոշվում են 1-ից 6-րդ տեղերը գրաված մասնակիցներ: Այնուհետև 2 ենթախմբերում 1-ին տեղերը գրաված մասնակիցները պայքարում են 1-ից 2-րդ տեղերի համար, 2-րդ տեղերը՝ 3-ից 4-րդ, 3-րդ տեղերը՝ 5-6-րդ, 4-րդ տեղերը՝ 7-8-րդ, 5-րդ տեղերը՝ 9-10-րդ և 6-րդ տեղերը՝ 11-12-րդ տեղերի համար:</p> |
|----|--|---|---|

| | | | |
|----|--|---|--|
| 2. | Շաշկի (անհատական մրցումներ) (տղամարդ, կին) | - | <p>Մրցումներն անցկացվում են շաշկու գործող կանոնների համաձայն, շրջանային մրցակարգով, վիճակահանությամբ:</p> <p>Ենթախմբերում մասնակիցների միավորների հավասարության դեպքում տրվում է լրացուցիչ մեկ խաղ:</p> <p>Մրցումներին 12 մասնակիցները վիճակահանությամբ բաժանվում են 2 ենթախմբի, և մրցման արդյունքներով յուրաքանչյուր ենթախմբում որոշվում են 1-ից 6-րդ տեղերը գրաված մասնակիցներ: Այնուհետև 2 ենթախմբերում 1-ին տեղերը գրաված մասնակիցները պայքարում են 1-ինից 2-րդ տեղերի համար, 2-րդ տեղերը՝ 3-ից 4-րդ, 3-րդ տեղերը՝ 5-6-րդ, 4-րդ տեղերը՝ 7-8-րդ, 5-րդ տեղերը՝ 9-10-րդ և 6-րդ տեղերը՝ 11-12-րդ տեղերի համար:</p> |
| 3. | Նարդի (անհատական մրցումներ) (տղամարդ, կին) | - | <p>Մրցումներն անցկացվում են կարճ նարդու կանոնների համաձայն, շրջանային մրցակարգով, հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը վաստակում է 3 միավոր:</p> <p>Ենթախմբերում մասնակիցների միավորների հավասարության դեպքում տրվում է լրացուցիչ մեկ խաղ:</p> <p>Մրցումներին 12 մասնակիցները վիճակահանությամբ բաժանվում են 2 ենթախմբի, և մրցման արդյունքներով յուրաքանչյուր ենթախմբում որոշվում են 1-ից 6-րդ տեղերը գրաված մասնակիցներ: Այնուհետև 2 ենթախմբերում 1-ին տեղերը գրաված մասնակիցները պայքարում են 1-ինից 2-րդ տեղերի համար, 2-րդ տեղերը՝ 3-ից 4-րդ, 3-րդ տեղերը՝ 5-6-րդ, 4-րդ տեղերը՝</p> |

| | | | |
|----|---|---|--|
| | | | 7-8-րդ, 5-րդ տեղերը՝ 9-10-րդ և 6-րդ տեղերը՝ 11-12-րդ տեղերի համար: |
| 4. | Դարթս (անհատական մրցումներ) (տղամարդ, կին) | - | <p>Մրցումներն անցկացվում են երկու փուլով՝ նախնական և եզրափակիչ:</p> <p>1-ին փուլում որոշվում է առավելագույն միավոր հավաքած վեցնյակը, որն էլ անցնում է եզրափակիչ փուլ:</p> <p>Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի կատարելու 5 փորձ 3 ական նետումներով:</p> <p>Եզրափակիչ փուլում միավորների հավասարության դեպքում տրվում է լրացուցիչ 1 փորձի իրավունք 3 նետումով:</p> |
| 5. | Բասկետբոլի գնդակի նետում զամբյուղի մեջ (տղամարդ, կին) | - | <p>Բասկետբոլի մրցումներն անցկացվում են երկու փուլով:</p> <p>1-ին փուլը անցկացվում է 3 փորձից, 5 ական նետումներով, որտեղ որոշվում է լավագույն վեցնյակը, որոնք կպայքարեն 1-ից 6-րդ տեղերի համար:</p> <p>Նետումները կատարում են տուգանային գծից՝ 5.8 մետր հեռավորությունից, N 6 կամ N 7 գնդակով, ազատ ոճով:</p> <p>Մրցանակային տեղերը որոշելու դեպքում հավասար միավորների դեպքում տրվում է լրացուցիչ 3 նետում: Հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը առավել քանակի միավորներ է վաստակել, յուրաքանչյուր դիպուկ նետման համար տրվում է մեկ միավոր:</p> |

VII. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

16. Խաղերի 1-ին փուլի մրցումներին առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված տարեցները պարգևատրվում են համայնքապետարանների համապատասխան կարգի հավաստագրերով.

17. Խաղերի 2-րդ փուլի մրցումներին առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված տարեցները պարզևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով:

18. Խաղերի 3-րդ եզրափակիչ փուլի առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված տարեցները պարզևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, մեդալներով և դրամական մրցանակներով, իսկ ամենատարեց մասնակիցներին՝ հուշանվեր:

19. Արդյունքներն ամփոփվում են Խաղերի ավարտից անմիջապես հետո, 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզերը պարզևատրվում են հավաստագրերով, գավաթներով, շնորհակալագրերով:

VIII. ԾԱԽՍԵՐԸ

20. Խաղերի 2-րդ փուլի մրցումներին առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզիկները պարզևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ մրցավաներին տրվում է սննդի գումար:

21. Խաղերի 3-րդ եզրափակիչ փուլի անցկացման ծախսերը՝ մրցումների անցկացման համար մարզագույքի, մրցավարների գործուղում՝ ուղեգիր (*գիշերավարձ, սնունդ*), ճանապարհաձախս, մրցավարներին դրամական պարգև, մասնակիցների գործուղում՝ ուղեգիր (*գիշերավարձ, սնունդ*), ճանապարհաձախս (մարզկենտրոնից), մարզաբազայի, ռադիոհանգույցի վարձակալում, հաղորդավարի ծառայություն, հուշանվեր ամենատարեց մարդկանց (1-տղամարդ և 1-կին) 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մասնակիցներին հավաստագրեր, մեդալներ, անհատական դրամական մրցանակներ՝

1) 1-ին տեղ՝ 95.0 հազար (*իննսունհինգ հազար*) դրամ:

2) 2-րդ տեղ՝ 85.0 հազար (*ութսունհինգ հազար*) դրամ:

3) 3-րդ տեղ՝ 70.0 հազար (*յոթանասուն հազար*) դրամ:

22. Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում, գովազդային նյութերի պատրաստում, նկարահանում, տրանսպորտային ծախսեր, գրենական պիտույքներ, հոգում է Նախարարությունը:

23. Խաղերի ծախսերն իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված ծրագրի շրջանակում:

IX. ՀԱՅՏԵՐԸ

17. Խաղերի մասնակցության նախնական հայտերը ներկայացվում են Նախարարություն մինչև տվյալ օրացուցային տարվա սեպտեմբերի 15-ը: Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (011) 52-28-53:

Օրինակելի ձև

Հաստատում եմ
 ՀՀ _____ (կազմակերպություն)
 _____ / _____ /
 «_____» _____ 2020 թ.

Հ Ա Յ Տ
 ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ

ՀՀ _____ քաղաքը, մարզը

() _____ 2020թ.

| N | Ազգանուն, անուն | Ծննդյան օր,ամիս, տարեթիվ | Անձնագրի կամ ծննդականի տվյալները | Հասցեն | Մարզաձև | Բժշկի թույլտվություն |
|-----|-----------------|--------------------------|----------------------------------|--------|---------|----------------------|
| 1. | | | | | | |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| 4. | | | | | | |
| 5. | | | | | | |
| 6. | | | | | | |
| 7. | | | | | | |
| 8. | | | | | | |
| 9. | | | | | | |
| 10. | | | | | | |

ԹԻՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ _____ / _____ /

_____ / _____ /

ԲԺԻՇԿ՝ _____ / _____ /